

ԽՍՀՄ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՄԵԾԱՀԱՐԳ Մ. Ս. ԳՈՐԲԱՉՈՎԻՆ

Մոսկվա

Տխուր սրտով դիմում ենք Ձեզ մի նոր անօրինականության առթիվ Լեռնային Ղարաբաղում, որ կարող է ծնունդ տալ ազգամիջյան նոր ողբերգություններ: «Բակինսկի Ռաբոչի» թերթում տպված է Ադրբեջանի իշխանության 21 Հունվարի առաջադրանքը՝ փակելու Ղարաբաղում Գանձասարի և Ամարասի հայկական վանքերը, որ փակված լինելով 1929-ի հալածանքների (ռեպրեսիաների) շրջանին, վերաբացվեցին 1989-ին հավատացյալների պահանջով և Մոսկվայի Եկեղեցական Գործերի Խորհրդի որոշումով:

Ամարասի վանքը հիմնված է չորրորդ դարում, իսկ Գանձասարի վանքը՝ տասներորդ դարու սկիզբներին, 1236 թվականին, հայկական դասական ճարտարապետության ոճով, պատմության ամբողջ ընթացքին լինելով հայ եկեղեցական և մշակութային կենտրոններ Ղարաբաղում:

Այժմ այնտեղ գործում են մեր հոգևորականները՝ գլխավորությամբ Պարգև Մարտիրոսյան եպիսկոպոսի:

Ադրբեջանի այս անիրավ որոշումի մասին տեղյակ է նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի համագումարը, որ այս օրերին տեղի է ունենում Կանբերայում: Ամեն տեղ ընդհանուր վրդովմունք կա քրիստոնյա աշխարհում:

Խնդրում ենք Ձեր անհապաղ վճռական միջնորդությունը Ձեր պրեզիդենտական իշխանությամբ հանուն կրոնական խղճի ազատության և Ղարաբաղի հավատացյալների արդար իրավունքի:

Ի սեր Աստուծո առաջքը առեք նոր արյունահեղությունների հոգուտ հայ և ադրբեջան ժողովուրդների:

Խորին հարգանք՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
15 փետրվար 1991 թ.